ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀԱՊԱԿ-ՄԱԱՊՁԲ-21/12»

ք. Երևան 02 փետրվարի 2021թ.

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն՝ Սերգեյ Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Շողերսոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Շողիկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագիրը Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները սահմանել պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ	«Շողերսոֆթ» ՍՊԸ
Հասցե՝ Նուբարաշեն 1/3	Հասցե՝ ք. Երևան, Ավան, Դուրյան թաղամաս, շենք 6, բն 22
ՀՎՀՀ՝ 00475611	ՀՎՀՀ՝ 0650087
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ	Բանկ՝ «Արարատ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 163068068481	Հ/Հ 1510006741690100
Տնօրեն՝ Ս. Խաչատրյան	Տնօրեն՝ Շ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
02 փետրվարի 2021թ. կնքված
«ՀԱՊԱԿ-ՄԱԱՊՁԲ-21/12» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
Հ/հ	CPV	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ժամկետը	
1	48441300	Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթ	№ п/п Համակարգի մոդուլներ M1 Կարգավորական հաշվառում (1C:Հաշվապահություն ծրագրի ներդրում) 1. «Փոխադարձ հաշվարկի կառավարում » 1.1 «Կոնտրագենտների հետ փոխադարձ հաշվարկների վարում » • Պայմանագրերի բաժնում հաշվառում կատարելիս գնորդների հետ փոխադարձ հաշվարկների արտացոլում; • Պայմանագրերի բաժնում հաշվառում կատարելիս մատակարարների հետ փոխադարձ հաշվարկների արտացոլում; • Փոխադարձ հաշվարկների արտացոլում՝ մատակարարների հետ հաշվառում կատարելիս պայմանագրերի և գործակալական հանձնաժողովների (պրինցիպալ) կողմից և հաշվին ապրանքների և ծառայությունների շահագործման վերաբերյալ համաձայնագրերի վարման սխեմայով; • Կանխավճարների սահմանում և հաշվարկ; • Լիազորագրի կազմում; • Կոնտրագենտների հետ հաշվարկներ տարադրամով և պայմանական միավորով; • Արժույթային գործողությունների վերագնահատում, արժութային ակտերի • Հաշվետվություններ ըստ դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների պիտանելիության ժամկետների • Հավելյալ ծախսերի մուտքագրում; • Հաշվի վարում, ամսական արդյունքին համապատասխան վերագնահատում, տարադրամով	հատ	1.000.000	1.000.000	1	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Պայմանագրի կնքման պահից 30 օրերի ընթացքում	

Հավելված N 2
02 փետրվարի 2021թ. կնքված
«ՀԱՊԱԿ-ՄԱԱՊՁԲ-21/12» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48441300	Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթ		1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000	1.000.000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ Նուբարաշեն 1/3
ՀՎՀՀ՝ 00475611
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ
Հ/Հ 163068068481
Տնօրեն՝ Ս. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Շողերսոֆթ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Դուրյան թաղամաս, շենք 6, բն 22
ՀՎՀՀ՝ 0650087
Բանկ՝ «Արարատ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510006741690100
Տնօրեն՝ Շ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

			ակտի կազմավորում; · Անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի պահուստաֆոնդերի ավտոմատ ձևավորում ըստ հաշվարկային փաստաթղթերի 1.2 «Փոխադարձ հաշվարկների վարում հաշվետու անձանց հետ» 1.3 «Փոխադարձ հաշվարկների համեմատում և պարտավորության ու գործիքների կառավարում» · Համեմատման ակտերի կազմում; · Ըստ հաճախորդների և համաձայնագրերի շրջանառու տեղեկագրերի կազմում; Շրջանառու տեղեկագրերում ըս գործընկերների, ըստ պայմանագրերի և հաշվարկային փաստաթղթերի վերլուծության հնարավորություն: · Դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների կառավարում;; · Կոնտրագենտների հետ հաշիվների գույքագրում : · E-invoicing համակարգի հետ ինֆորմացիայի (ձեռք բերման, վաճառքի, գնորդների կողմից վերադարձի և Մատակարարնին վերադարձվող գործարքների) փոխանակում (ներբեռնում և արտահանում): Արտահանված ինֆորմացիայով ձեռք բերումների ֆայլերում էլեկտրոնային հաստատումների ավտոմատ գրանցման հնարավորություն: 2. «Բանկ և Դրամարկղ» 2.1 «ԲԱՆԿ» · Մուտքային և ելքային վճարման հանձնարարագրերի կազմում; · Վճարման հանձնարարագրերի կազմում; · Փոխարժեքային տարբերությունների հաշվում; · Տարադրամի փոխանակում; · Տարադրամի փոխարժեքի ավտոմատ ներբեռնում; · «Բանկի քաղվածքի» կազմում և մշակում; · Անկանխիկ վճարումների աշխատատեղի ձևավորում պարտավորությունները ըստ վճարման ամսաթվերի մարելու հնարավորությամբ: 2.2 «Հաճախորդ-Բանկ համակարգի հետ ինտեգրում » · Հաճախորդ-Բանկ-ի ինտերֆեյսի մեջ Վճարման Հանձնարարագրերի կազմում և բեռնում; · Հաճախորդ-Բանկ-ից էլեկտրոնային բանկային քաղվածքների ներբեռնում համակարգ;						

			· Հաճախորդ-Բանկից ստացված ռեկվիզիտների հիման վրա կոնտրագենտների ավտոմատ փնտրում; · Հաշվով դուրսգրման ժամկետի հիման վրա՝ գումարային միջոցների շրջանառության փաստաթղթերի ավտոմատ կազմում; 2.3 «ԴՐԱՄԱՐԿՂ» · ԴՄՕ, ԴԵՕ դրամարկղային վճարային փաստաթղթերի գրանցման վարում; · Գումարային փաստաթղթերի հաշվառման վարում; · Դրամարկղային գրքի կազմում; · Կանխիկ գումարային միջոցների փոխանցում բանկ՝ 256 հաշվի օգտագործմամբ (փոխանացումներ ճանապարհին); · Արտարժույթով դրամարկղային գործողությունների հաշվառում; · Կանխավճարային հաշվետվությունների վարման հաշվառում; · Գումարային միջոցների գույքագրում: Տեղական ձևաչափ 3. «ԱՆԱ-ի ՀԱՇՎԱՌՈՒՄ» 3.1 « ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ » · Սարքավորումների և կառուցման օբյեկտների հաշվառում; · Հիմնական միջոցների ձեռքբերում, ստացում և կառուցում; · Հիմնական միջոցների ճանաչում; · Հիմնական միջոցի իրաղարձությունների և վիճակների հաշվառում; · Հիմնական միջոցների տեղափոխություն; · ՀՄ-ի նորոգում, վերակառուցում և արդիականացում; · Հիմնական միջոցների գույքագրում; · Մաշվածք; · Դուրսգրման ճանապարհով հիմնական միջոցների օտարում; · Վաճառման ճանապարհով հիմնական միջոցների օտարում; · ՀՄ-ի վերագնահատում, · ՀՄ-ի տեղեկատուի միացում ՀՄ-ի նորմատիվ						

			ծառայության տեղեկատուին; • ՀՄ նորոգումների տվյալների հիման վրա հարկային հաշվառման հատվածում ծախսերի կապիտալացման գործընթացի ավտոմատացում 3.2 «ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ » • Շահագործման հանձնում; • Շահագործման վերադարձ; • Շահագործման մեջ նյութերի տեղափոխում; • Շահագործումից դուրսգրում; • Արժեքի մարում; 3.3 «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ » • Նյութերի և ապրանքների մուտքագրում; • Նյութերի և ապրանքների շահագործում; • Նյութերի և ապրանքների գույքագրում; • Նյութերի և ապրանքների պակասորդի դուրսգրում; • Նյութերի և ապրանքների ավելցուկի մուտքագրում; • Նյութերի և ապրանքների միջպահեստային տեղափոխում; • Դեղերի, դեղամիջոցների և բուժպարագաների հաշվառում: 3.4 «ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՀԱՇՎՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ » • Ծախսերի վրա նյութերի դուրսգրում; • Ձեռնարկությունների կողմերի մատակարարած ծառայությունների ծախսերի արտացոլում; • Այլ ծախսերի արտացոլում; • Արտադրվող ապրանքի ինքնարժեքի հաշվում՝ ծախսերի արտացոլման և տարածման օրենքներին համապատասխան; • Պացիենտների բուժման վրա կատարված ծախսերի անհատական հաշվառում: • Պացիենտների տրվող սննդի հաշվառում – բանակագումարային հաշվառում: Ինքնարժեքի ավտոմատ ձևավորում • Պատրաստվող սննդի պատրաստման ժամանակ ըստ բաղադրատոմսեր ծախսագրվող մթերքների ավտոմատ ելքագրում: Անհրաժեշտ դեպքում պատրստվող սննդամթերքի կալորիականության մասին						

			տեղեկատվության ապահովում: 4. «ԱԱՀ-Ի ՀԱՇՎԱՌՈՒՄ» · Շահագործում 0%; 20% դրույքաչափով; Առանց ԱԱՀ ; ԱԱՀ-ի հաշվային դրույքաչափով; ԱԱՀ դրույքաչափով գործարքների հաշվառումը ավտոմատ օրենքի կետերի նշումով հետագայում ԱԱՀ հաշվարկում համապատասխան տողերում ավտոմատ ներկայացման համար: · ԱԱՀ-ի չավտոմատացված արտացոլում՝ չավտոմատացված կերպով մուտքագրված գործողությունների գծով; · Ավելացված արժեքի հարկի մասին հաշվետվություն · Տեղեկատվության փոխանակում ԱԱՀ-ի գծով հարկային մարմինների հետ · ԱԱՀ դեբետագրվող մասի ավտոմատ որոշում հավի առնելով ձեռք բեման փաստաթղթերի էլեկտրոնային հաստատման տվյալները: 5. «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ » · Գալիք ժամանակաշրջանի ծախսերի հաշվառում; · Ֆինանսական արդյունքի կազմում; · Հաշվեկշիռի վերակազմավորում; · Հաշվապահական հաշվառման մեջ կասկածելի պարտքերի պահուստի կազմում: 5.1 «ԿԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀՀ-ով » · Հաշվապահական հաշվեկշիռ (Ձև №1); · Ֆինանսական արդյունքի կազմում (Ձև №2); · Սեփական կապիտալի էլեմենտների շարժի ձևավորման մասին հաշվետվություն (Ձև №3); · Գումարային միջոցների շարժի մասին հաշվետվություն (Ձև №4) · Հավելվածներ հաշվեկշռին: Ձևաչափեր տրամադրված Պատվիրատուի կողմից 6. «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ » · Ներկայացուցչական ծախսերի նորմավորում · Շահութահարկի հաշվում՝ հարկային						

			օենսդրության համաձայն · Հարկային ռեգիստրների կազմում; · Հարկային հաշվառման հաշվի փակում; · Գործուղումային ծախսերի նորմավորում; · Ծախսերի նորմավորում; · Հարկային հաշվառման մեջ կասկածելի պարտքերի պահուստաֆոնդի կազմում; 6.1 «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ » · Շահութահարկի հաշվարկ; · ԱԱՀ-ի վերաբերյալ հաշվարկ; · Անշարժ գույքի հարկի վերաբերյալ հաշվարկ · Տրանսպորտային միջոցների գույքահարկի մասին հաշվարկ · Ակցիզային հարկ · Բնապահպանական վճարների հաշվում · Վիճակագրական հաշվետվությունների հաշվարկ (ոչ ավտոմատացված լրացում) · Ապրանքի և պաշարների ֆիզիկական ծավալի հայտարարագիր M2 ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ(1C:ЗУП ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ) 7. «ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ » 7.1 «ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ » · Աշխատակազմի ժամանակացույցի վարում · Աշխատանքի ժամանակացույցի կազմում; · Ձեռնարկության աշխատակիցների մասին տեղեկությունների մուտքագրում; · Աշխատանքի ընդունում; · Կադրային տեղափոխում; · Աշխատանքից ազատում; · Կադրային հաշվառման մասին հաշվետվություն; · Աշխատանքային գրաֆիկների ձևավորում · Ինդիվիդուալ գրաֆիկների ձևավորման հնարավորություն: 7.2 «ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ» · Արձակուրդայինների, արձակուրդայինների մնացորդների ժամանակացույց; · Գործուղումներ;						

			· Հիվանդաթերթիկներ; · Բացակայություններ, պարապուրդները և աշխատավայրից աշխատակցի այլ բացակայություններ; · Կառավարական հաշվառման հաշիվների նշում աշխատակցի քարտի մեջ՝ կառավարական հաշվառման նշված հաշիվների վրա աշխատավարձի հաշվեգրման հետագա թողարկմամբ 8. «ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎՈՒՄ » 8.1 «ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ » · Աշխատակիցների աշխատանքային ժամերի հաշվառում: Աշխատանժամանակի հաշվառման աղյուսակ; · Պլանային հաշվարկների և պահումների մասին տեղեկությունների մուտքագրում; · Մեկանգամյա հաշվարկների և պահումների հաշվում; · Պարգևավճարների հաշվարկ; · Կենսաթոշակային հիմնադրամի հաշվին նպաստների հաշվարկ; · Շահաբաժնի հաշվարկ; · Տոնական և ոչ աշխատանքային օրերին աշխատանքի վճար; · Արտաժամյա աշխատանք; · Գիշերային աշխատանք; · Աշխատակիցներին՝ սննդի համար վճարների արտացոլում: Ծառայողական ճաշերի հաշվառման վարում, որպես վճարների առանձին տեսակ (որպես աշխատած օրերի քանակով նորմատիվ, տեղեկությունները հայտնվում են ոչ Micros-ից) և աշխատակիցների աշխատավարձերից պահումների ավտոմատ կազմում:; · Աշխատակցի աշխատանքից ազատման ժամանակ հաշվարկ; · Պարապուրդների գրանցում; · Կատարողական թերթիկներ; · Ապահովագրական տուրքերի հաշվարկ; · Կարգավորական հաշվառման մեջ աշխատավարձի արտացոլում; · Ավանդադրում (ավանդադրվող գումարների հաշվառում); · Պարտադիր ապահովագրության համար						

			մասնահանումների հաշվարկ; · «Աշխատավարձ և անձնակազմի կառավարում» և Բանկ-Հաճախորդ ծրագրերի միջև տեղեկատվության փոխանակման հնարավորություն (ցուցակի բեռնում աշխատավարձի վճարման վրա) · «Աշխատավարձ և անձնակազմի կառավարում» և Հաշվապահության ծրագրերի միջև տվյալների ավտոմատ փոխանակման հնարավորություն հաշվապահական ձևակերպումների ավտոմատ ձևավորմամբ: · Արձակուրդային պահուստաֆոնդի ձևավորում և պահուստաֆոնդի տվյալների ավտոմատ ներբեռնում հաշվապահության ծրագիր · Քաղիրավական պայմանագրերով աշխատանքների հաշվառման կազմակերպում Աշխատավարձ և կադրերի կառավարման կոնտուրում: · Եկամտային հարկի հաշվարկի ավտոմատ ձևավորում (ներառյալ քաղիրավական պայմանագրերի հատվածի տվյալները): · Եկամտային հարկի հաշվետվության Հարկայինի բազա ներբեռնելու ավտոմատ համակարգի ձևավորում: · Կադրային փոփոխությունների տվյալներով հայտերի ձևավորում հարկային բազա ներմուծելու հնարավորությամբ: 8.2 «ԿԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ »						

ԳՆՈՐԴ

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ Նուբարաշեն 1/3
ՀՎՀՀ՝ 00475611
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Երեբունի մասնաճյուղ
Հ/Հ 163068068481
Տնօրեն՝ Ս. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Շողերսոֆթ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Դուրյան թաղամաս, շենք 6, բն 22
ՀՎՀՀ՝ 0650087
Բանկ՝ «Արարատ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510006741690100
Տնօրեն՝ Շ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ